11/03/2024թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանին

Հարգելի պարոն Բադասյան,

«Հետք»-ը դեղերի շրջանառության վերաբերյալ քաղաքացիների մի շարք դժգոհությունների պատճառները պարզելու նպատակով իրականացնում է ուսումնասիրություն:

Ուսումնասիրություն իրականացնելու առիթ է հանդիսացել նաև այն, որ ըստ «Հետք»-ին դիմած քաղաքացիների՝ գնված դեղերի համար դեղատները դրամարկղային կտրոն չեն տրամադրում, դեղերի տուփերի վրա դրոշմապիտակներ փակցված չեն լինում, ինչը մտավախություն ու կասկածներ է առաջացնում դեղի պատշաճ որակի համար:

«Հետք»-ի լրագրողները բողոքների հետքերով գնումներ են կատարել տարբեր դեղատներում: Մասնավորապես՝

1. ՍԱՍ սուպերմարկետներում գտնվող «Ֆարմա լայք» դեղատնային ցանցի՝ մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի դիմաց գտնվող դեղատնից գնել են 20 դեղապատիճ «Ռեդուկսին» դեղը: Դեղի տուփի վրա փակցված դրոշմապիտակի վերծանված տվյալներից պարզվում է, որ ներմուծողը դրոշմապիտակների էլեկտրոնային գրանցման համակարգում մուտքագրել է ոչ դեղի համար նախատեսված տվյալներ, այն է՝ դեղի արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱԱ) կոդի (3004) փոխարեն նշված է չփաթեթավորված վիտամինների կոդ (2936): Ապրանքատեսակն էլ արտացոլված է ոչ որպես դեղ, այլ վիտամին: Թեև այն վիտամին չէ, այլ դեղատոմսով բացթողման ենթակա դեղ է, քանի որ դեղի օգտագործման հրահանգում նկարագրված է, որ դեղը, ազդելով կենտրոնական նյարդային համակարգի վրա, հագեցվածության զգացում է առաջացնում, ուղղված է ճարպակալման դեմ, օգտագործվում է ծայրահեղ դեպքերում, երբ բուժման այլ տարբերակ բացակայում է: Դեղի օգտագործման հրահանգի կողմնակի ազդեցությունների բաժնում նշված է, որ այն կարող է առաջացնել հոգեգան խանգարումներ, մասնավորապես՝ փսիխոզ, սուիցիդալ (ինքնասպանության) մղումներ, մոլագարություն:
Դեղատանը տրամադրված դրամարկղային կտրոնի վրա բացակայում է դեղի անվանումը և արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) կոդը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հիշյալ դեղը ՀՀ տարածք է ներմուծվել մաքսանենգ ճանապարհով, կամ, առնվազն՝ առանց պատշաճ մաքսային ձևակերպման:

2. **«Մարկ ֆարմ»** դեղատնից գնել ենք 2 անվանում հակաուռուցքային դեղ՝ «Էպիրուբիցին» 50մգ և «Գեմցիտաբին» 1000մգ: Դեղատունը գտնվում է Աբովյան փողոցի վրա: Դեղը գնելիս, երբ պահանջեցինք տրամադրել ՀԴՄ կտրոն, աշխատակցուհին հայտարարեց, որ եթե ուզում ենք կտրոն ստանալ, այդ դեպքում դեղը զեղչել չի կարող: Հիշյալ երկու դեղերի վրա էլ բացակայում են պարտադիր փակցման ենթակա դրոշմապիտակները:

3. «ԱԲԱ-ՖԱՐՄ» («Աննա Բաղեյան» ԱՁ) դեղատնից գնել ենք հակաուռուցքային բուժման սխեմաներում օգտագործվող թուրքական արտադրության «Էմենդ» հակափսխումային դեղը: Դեղը գնելիս դեղատան աշխատակիցը ՀԴՄ կտրոն չի տարամադրել, տրամադրել է միայն մեր պահանջելուց հետո, իսկ դեղի տուփի վրա բացակայել է դրոշմապիտակը: Դեղատունը գտնվում է Ուլնեցի փողոցի վրա:

4. «**Նունե Եղիազարյան»** դեղատնից գնել ենք թուրքական արտադրության «Դիպրոպան» հորմոն: Դրա դիմաց մեզ տրամադրել են «Ֆլոստերոն» ՀԴՄ կտրոն: Դեղի վրա բացակայում է դրոշմապիտակը:

5. **«Մարկ Ֆարմ»** դեղատնից գնել ենք «Յանուվյա» և «Նովորապիդ» շաքարային դիաբետի թուրքական արտադրության առանց դրոշմանիշերի դեղերը: Այս դեղատանը, ևս, աշխատակիցը հրաժարվել է գնման համար ՀԴՄ կտրոն տրամադրել, ինչը պարզաբանել է այն հանգամանքով, որ «հարկային դաշտում դեղը գրանցված չէ» և առաջարկել է մեկ այլ դեղի գնման ՀԴՄ կտրոն տրամադրել նույն ընկերության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող դեղատնից, որի վրա, սակայն, նշված չի լինելու դեղի անվանումը:

6. **«Գրին Լեյն»** դեղատնից (գտնվում է Տիգրան Մեծ փողոցում) գնել ենք թուրքական արտադրության «Լանտուս» դեղի 3 գրիչ: Այս դեպքում, ևս, դեղի համար չի տրամադրվել ՀԴՄ կտրոն, փոխարենը տրամադրվել է «Յանումետ» դեղի կտրոն:

7. «36.6» («ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի մանրածախ դեղատնային ցանց **«ՌԻԹՄ-ՖԱՐՄ» ՍՊԸ)** դեղատնային ցանցի դեղատներից մեկից գնել ենք «Վոլտարեն» 50մգ, «Սիրդալուդ» 2մգ, «Սիրդալուդ» 4մգ և «Կլաֆորան» դեղերը: Դեղերը դրոշմապիտակավորված են, դրամարկղային կտրոն դեղատանը տրամադրել են, սակայն, մեր իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ գնված դեղերը գրանցված չեն ՀՀ-ում:

Խնդրում եմ պարզաբանել՝

1. Ինչպե՞ս է հնարավոր դարձել «Ռեդուկսին» դեղը ԱՏԳԱԱ 3004 կոդի փոխարեն որպես չփաթեթավորված վիտամին ԱՏԳԱԱ 2936 կոդով հայտարարագրելը և ՀՀ տարածքում որպես ԱՏԳԱԱ 2936 կոդի վիտամին իրացնելը:

2. Ինչպե՞ս է հնարավոր դարձել առանց համապատասխան դրոշմապիտակների և առանց ՀԴՄ կտրոնի տրամադրման կամ տվյալ դեղի փոխարեն այլ դեղի ՀԴՄ կտրոնով իրացումը ՀՀ-ում:

3. Դիմու՞մ է, առհասարակ, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխօգնության կարգով ՊԵԿ-ին՝ ստանալու ներմուծման և իրացման տվյալներ այն դեղերի վերաբերյալ, որոնց ներմուծման թույլտվություն Առողջապահության նախարարությունը ներմուծող ընկերությանը չի տրամադրել: Մասնավորապես, դիմե՞լ է արդյոք Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը ՊԵԿ-ին սույն գրության 7-րդ կետում նշված դեղերի ներմուծման և իրացման տվյալները ստանալու համար:

Կանխավ շնորհակալություն,

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր՝
Էդիկ Բաղդասարյան